ՀՏԴ 891.981-8 Մկրտումյան
ԳՄԴ 84Հ

Մ 807 **Մկրպումյան Կարինե**

Հաշվում է ողջ աշխարհը: Միջին և բարձր փարի-
քի դպրոցականների համար / Կարինե Մկրփումյան,-
Եր., 2013 թ.-70 էջ:

Գրքույկում մեկփեղված են աշխարհում լայն փարածում գփած խրախճանականների չափածո փարբերակները, որոնք նպափակ ունեն զարգացնելու ընթերցողների փրամաբանական, մաթեմափիկական ունակությունները, ինչպես նաև՝ համալրելու գիփելիքների պաշարը՝ ծանոթացնելով մի շարք պափմական փասփերի և իրողությունների:

ՀՏԴ 891.981-8 Մկրտումյան
ԳՄԴ 84Հ

**ISBN 978-9939-0-1147-9** **© Մկրտումյան Կ., 2014**

**2013**
**ԵՐԵՎԱՆ**

Կ. Ս. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ՔԵՐԱԿԱՆ



# ՈՒՂ ԱՇԽԱՏԱՆՔ

I ՄԱՍ

# ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

«Հաշվում է ողջ աշխարհը» խորագրով եռհատորյակը «Խնդիրներ փարիկիս անդուկից» գրքույկների օրգանական շարունակությունն է: Այստեղ զետեղված են հայտնի խրախճանականներից լավագույն մասունքներ, որոնք թևածում են ողջ աշխարհում, բայց դեռևս անծանոթ են հայ ընթերցասերներից շատերին:

Հուսով եմ՝ դրանցում հանդիպող հունական, հնդկական, եգիպտական, պարսկական, քրդական, ֆրանսիական, խպանական, ռուսական և, իհարկե, հայկական հատընտիր խնդիր-բանասպեղծությունները կհետաքրքրեն բոլորին:Նրանց նպատակն է զարգացնել ընթերցողների ոչ միայն տրամաբանական, մաթեմատիկական ունակությունները, այլև ծանոթացնել պատմական որոշ իրադարձությունների, այս կամ այն դեպքի հետ կապված փաստ-իրողությունների: Միով բանիվ՝ ներկա ժողովածուն ունի ճանաչողական նշանակություն, նորանոր գիտելիքներ ուսուցանելու հնարավորություն:

*Անելիքն առավել կենդանի և խոսուն դարձնելու նպատակով՝ չափածո խնդիրները համեմված են բազմաթիվ դարձվածքներով՝ ժողովրդախոսակցական լեզվի առինքնող գոհարներով, և այդ հանգամանքը նպաստում է հեղինակ-ընթերցող կապի առավել սերտացմանը, որը վերջում ինչ-որ տեղ վեր է ածվում խորհրդի, բարեմաղթանքի, ցանկության կամ պասսիվ երկխոսության:*

*Սիրելի՛ բարեկամ, խրախճանականն առաջին անգամ կարդալիս գնահատիր նրա գեղարվեստական արժեքը և ընկալիր բովանդակությունը: Երկրորդ ընթերցման ընթացքում միայն այն դիտարկիր որպես պրագմաբանական առաջադրանք, որպեսզի ճշտորեն վերլուծես՝ բաց չթողնելով սյուժետային որևէ նրբություն, քանզի շատ դեպքերում դրանով է պայմանավորված խնդրի ստույգ պատասխանը:*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԿՈԼՈՒՄԲՈՍԸ
- 6 -



ՊԱՊԻՐՈՒՍԸ
- 14 -



ՈՍԿԵՐԻՉԸ
- 26 -



ԱՆԱՆԻԱՆ
- 33 -



ՏԱՐԻՔԸ
- 43 -



ՇՈՒԿԱՅՈՒՄ
- 47 -



ՎԱՍԻԼԻՆ
- 55 -

# ԿՈԼՈՒՄԲՈՍԸ

Ո՞վ չգիտի Կոլումբոսին՝
Մեծահամբավ այդ ինքնուսին,
Որը գտավ անզուգական
Նոր աշխարհը՝ Ամերիկան:
Իսպանիայի ծովակալը
Դափնիների արժանացավ,
Փառք ու հռչակ ձեռք բերելով՝
Ծափ-շափերի կուռքը դարձավ:
Ցավոք, եղան կասկածավոր
Նենգ մարդուկներ նախանձավոր,
Որ փորձ արին նսեմացնել
Արված գործը արժեքավոր:
Մի օր անձամբ կարդինալից՝
Վեհապատիվ Մենդոզայից,

Կոլումբոսը կանչ սպասավ,
Հրավերքին ներկայացավ:
Ազնվաշուք ձոխ դղյակում
Խախաճաշ էր այդժամ փրվում,
Ներկա էին ընտրյալ հյուրեր`
Մեծահարուստ բազում այրեր:
Անհարկի և անժամանակ
Ցարալեզու մի սպահակ,
Վրա պալով ապուխտներին,
Զոռ էր պալիս խայթող լեզվին.
-Ծովագնա'ց շատ հարգարժան,
Ի՞նչ ես արել փառքի արժան,
Քեֆիդ համար նավարկել ես,
Մայրցամաքն է պապահել քեզ:
Լեղի խոսքից լեզու առած,
Մի իմաստակ քաջալերված



Ծույն-ծիծաղը չզսպելով՝
Զազրախոսեց կակազելով.
-Համոզված եմ, որ հեշտորեն
Ամենքն էլ դա կիրագործեր,
Ա՛յ, ուրիշ բան եթե նորեն
Մեծ մոլորակ հայտնագործեր:
Ծովակալը համբերապար
Ընկն դրեց բարբաջներին,
Մրքովն անցավ փեղը դնել
Իմաստրամոլ չկամներին:
Խաշված ձվեր կային շարված
Զազմախորդիկ սեղաններին,
Մեկ հատ ձեռքը առավ ձեռաց՝
Դարպվիրելով ներկաններին.
-Թե կարող եք, հապա վերցրեք,
Զթի վրա այն կանգնեցրեք,

Երբ լուծումը դուք կգտնեք,
Ձայն չեմ հանի, թե որ ծաղրեք:
Սեղանակից բոլոր մարդիկ
Համառորեն ճիգ թափեցին,
Բայց հավկիթը կորաքթիկ
Իրենց կամքին չենթարկեցին:
-Անհնա՛ր է, ո՞նց կատարենք,
Անիրական բան ես ուզում,
Որքան էլ որ զգույշ դնենք,
Մե՛կ է, ուղիղ սա չի մնում:
-Անկարելի ոչինչ չկա՛,
Ուղեղ է պետք, որը չկա,
Դե՛, ինձ նայեք, ահա այսպես,
Տեղում տնկեց ասածի պես:
Ունայնամիտ թերությունները,
Ճանթահարված սուր լուծումից,



Գոռգոռացին միաբերան՝
Խուսափելով պարտությունից:
-Ինչո՞ւ, մի՞թե որևիցե
Պայման էի դրել, ասե՛ք,
Խնդրել էի, որ կանգնեցնեք,
Իրագործեք՝ ինչպես կուզեք:
Այշեցուցիչ հնարանքը
Մի քանիսն էլ կապարեցին,
Օրինակը կրկնելով՝
Իրենց հաղթող համարեցին:
-Հիմա լսե՛ք խոսքս շիպակ,
Տարբերությունն այն է միակ՝
Գաղափարն այս գերպարզունակ
Ե՛ս փվեցի հեշտ ու արագ:
Բարդ ու խրթին ցանկացած հարց
Միշտ էլ ունի դյուրին լուծում,

Գտնել է պետք, դուք չե՞ք կարծում,
Դա է, ըստ իս, հայտնագործում:
Գուցե գործս թվա նվաստ,
Մինչդեռ փաստը մնում է փաստ,
Ամերիկան ինձնից էլ վաղ
Ուրիշներն են գտել, ավա՜ղ,
Սակայն ես եմ քարտեզագրել
Ու Նոր աշխարհի վրան գրել:

Ընթերցասե'ր համբերատար,
Ասա', արդյո՞ք գլխի ընկար,
Ծովակալը ինչպես դրեց,
Որ հավկիթը տեղում տնկվեց:

# ՊԱՊԻՐՈՒՍԸ

Երբ Եգիպտում
Սկսվեց պեղում,
Արշավախումբը՝
Հնագիտական,
Դամբարան գրավ
Խուլ անապատում՝
Խոսուն իրերով
Անհավանական:
Զմռսված դի կար,
Իսկ նրա կողքին՝
Ծալված պապիրուս՝
Խունացած ու հին,
Գրվածքը՝ խամրած,
Մասամբ պահպանված,



Անընթեռնելի
Ծվերով պատված:
Մասնագետները
Հերթով զննեցին
Ու՝ միահամուռ
Կերպով պնդեցին,
Որ փաստեր ունեն
Վաղնջությունից,
Մեր թվագրության
Ծածուկ էջերից՝
Քսան դար առաջ
Եղած անցքերից:
Ծեր գրածոյի
Գրառումները
Մեծ դժվարությամբ
Երբ վերծանեցին,

Մի մասն էլ մասամբ
Մուկ գուշակեցին,
Ամենքի համար
Արդեն պարզ դարձավ՝
Խոր դամբարանում
Պառկած էր, հարկավ,
Ո՛չ պապահական
Ինչ-որ շինական,
Այլ՝ մեծահարուստ,
Հարգված զոր անհատ՝
Ճանապարհված մարդ:
Նա երկար ու ձիգ
Օրեր էր ապրել,
Մոտ հարյուր տարի
Կյանքն էր վայելել,
Յոթ կին էր առել,

Առանձին պահել,
Նրանք ամենքը
Իրարու երկ
Ցոթ պղաներ են
Լույս աշխարհ բերել,
Իրենց սիրեցյալ
Այրին նվիրել:
Թափելով գրված
Պարզամ-խոսքերից՝
Ցոթ թիվն այնպես է
Պաշտել ու սիրել,
Որ պապվիրել է
Յուր հետնորդներին
Ցոթ արու որդի
Ցոհմին նվիրել,
Մե չէ կզրկի

Ժառանգությունից
Ով չի ընդունի
Իրեն ազգակից:
Ասլան տղերքը
Դեռ վաղ տարիքից
Ծնող են դարձել
Իրար ետևից:
Հենց որ զույգվելու
Պահին է մոտեցել,
Աղջիկ են ընտրել,
Շուտ ամուսնացել:
Յուրաքանչյուրը,
Հլու փափագին,
Յոթ ժիր մանչուկ է
Պարգևել ազգին:
Վերջին սերունդն էլ



Ետ չի մնացել,
Տարիներ հետո,
Երբ որ նրանք են
Հերթով մեծացել,
Տղամարդ դարձել,
Տնավորել է
Պապը բոլորին՝
Հորդորն ուղղելով
Եվ փոքրիկներին:
Տղա թոռները,
Իրագործելով
Նախնու իղձերը,
Ծնունդ են տվել
Շատ որդիների՝
Նախորդների պես,
Բոլորին ի պես:

Այնքան մանկիկ են
Չեն ցերին հանձնել,
Մինչև յոթ մանչի
Հայրիկ են դարձել:
Ամենի մասին
Սկարն է փապում,
Քանզի գրվածքի
Բուն վերջնամասում
Բարձրուղեշ ծառ կար՝
Իյուր անուններով,
Հազար ու մի թիվ
Գրառումներով:
Այն իրականում
Ցեսքով ճյուղավոր
Անչափ նման էր
Կաղնու դարավոր:



Երբ պարմությունը սույն
Թերթերում փըպվեց,
Մեջս հանձարեղ
Գաղափար ծնվեց,
Ազգականներիս
Կգնամ այցի,
Որ պարասխանեն
Նրանք մի հարցի,
Թե ովքեր են մեր
Ցեղի մեծերը,
Ո՞ւմից են սերում
Իմ արմապները:
Ինձանից կախված
Ամեն բան կանեմ,
Եթե կարենամ,

Ծառ կնկարեմ:
Իսկ թե դու էլ ես
Ուզում փորփրել,
Քո փոհմածառը
Անձամբ պատկերել,
Նախ՝ բարի եղիր
Եվ պատրաստակամ՝
Հին պապիրուսում,
Խիստ աղավաղված,
Քանի հոգի կար
Գրված-գրառված,
Ճյուղեճյուղ նշված,
Ցոհմում ներառված:

# ՈՍԿԵ ՈՒՂԸ

Արքունական գանձարանին,
Անձամբ Դարեհ շահնշահին,
Հարկավոր էր լավ ոսկերիչ,
Որն իմանար ոչ թե փոքր-ինչ,
Այլ քարերից գլուխ հաներ,
Շքեղաշուք զարդեր շիներ,
Ոսկու հարգը ճիշտ որոշեր,
Հետն էլ ջաներ զօր ու գիշեր:
Հրամայեց պարսից արքան՝
Ծախընտրական մրցույթի գան
Ոսկերիչներ ամեն ազգի,
Ահել-ջահել, ով կհարգի
Պահանջները առաջ քաշված
Եվ պարզորոշ ներկայացված:



Եկան բազում զարդագործներ,
Ի ցույց դրին անթիվ գործեր,
Արաձներով հպարտացան,
Շեն-շնորհքով հույժ պարծեցան:
Բահակալը չէր գոհանում,
Փորձության էր նա ենթարկում
Անուն հանած վարպետներին,
Զարդարվեստի հանճարներին:
Արքեմենյան հսկան գիտուն
Գիտեր անել ճիշտ ընտրություն,
Անտեսելով փառք ու անուն՝
Կատարում էր լուրջ զննություն:
Դրա համար դեռ վաղօրոք
Սեղանին էր դնել տվել
Մի սկուտեղ՝ դահեկանով՝
Արքայական վեհ պատկերով,

Ոսկուց ձուլված կամ ոսկեգույն,
Քանզի մեկը դրամներից
Պարրապարված էր զառ-դեղնագույն,
Գույզն-ինչ թեթև, կեղծ մետաղից:
Միանման նմուշները
Ծվով ինը հարիկ էին,
Փափկությամբ ու իրենց պեսքով
Տարբերակիչ բան չունեին:
Ճուրբ կշեռք կար լծակավոր,
Որ կախված էր նույն սեղանից,
Ամեն մրցող արհեսպավոր՝
Անկախ փորձից ու հոչակից,
Խարդախվածը պետք է գտներ,
Առանձնացներ, մի կողմ դներ,
Սահմանափակ՝ երկու անգամ,
Ոսկիները կշռաքաշիներ:

Վարպետները հերթով գալիս,
Ջանում էին, ատամ տալիս,
Այս ու այն կողմ պտրտելով՝
Ճշված թվով կշեռք անում,
Սակայն այդպես՝ գուշակելով,
Ոչ մեկին էլ չէր հաջողվում
Գեթ երջանիկ պատահմունքով
Զատել թյուրը արդարներից՝
Ութ հայտ ազնիվ մետաղներից:
Բայց գտնվեց մի պարմանի՝
Խորագիտակ, ժիր պատանի,
Որը առանց տատանվելու,
Մեկ վայրկյան իսկ երկմտելու
Բարիկները ձեռքը առավ,
Վստահորեն իր գործն արավ,
Վարժ ու հմուտ կշռաչափեց,



Անարժեքը առանձնացրեց:
Շահը սրտանց ուրախացավ,
Որ տանջանքը իզուր չանցավ,
Սրտի ուզած քանիմացը
Մրցությանը ներկայացավ:
Ջահել տղուն փառաբանեց,
Ճկուն միտքը գովաբանեց,
Գանձապահի թափուր տեղը
Տեղնուտեղը նրան տվեց:

Բարդ խնդիր չէ, Աստված վկա,
Շատ խորհելու կարիք չկա,
Հարկ է չնչին կենտրոնացում,
Հարցս ունի դյուրին լուծում:

# ԱՆԱՆԻԱՆ

Յոթերորդ դարի
Հայազգի հսկան՝
Շիրակավանցի
Ուսյալ Անանիան,
Որը հարգում էր
Ամեն գիտություն՝
Մաթեմատիկա,
Երաժշտություն,
Քերականություն,
Բնագիտություն,
Աշխարհագրություն
Կամ էլ՝ բարդագույն
Աստղաբաշխություն,
Հայտնի է որպես



Տիեզերագետ,
Խոր իմաստասեր
Ու տոմարագետ,
Ճշգրիտ գիտության
Հայր-հովանավոր,
Մեծն ուսուցիչ
Եվ այր պատվավոր:
Դեռ երիտասարդ`
Ծաղկուն տարիքում,
Ուսում է առել
Շատ երկրներում,
Շրջագայել է
Ողջ Տրապիզոնով,
Բյուզանդիայով մեկ,
Հին Արևելքով:
Վերադարձել է

Երկիրն իր Հայոց,
Հիմնել է դարբնոց՝
Բարձրագույն դպրոց,
Բազում սաներ է
Կրթել իմաստուն,
Ովքեր դարձել են
Անձինք մեծանուն:
Դպրության ամրոց
Յուր կրթօջախում
Աշակերտներին
Հափ-հափ էր ընտրում,
Նրանց, ովքեր որ
Ուղեղ ունեին,
Մտքի կանթեղը
Վառ կպահեին,
Դրա համար էլ



Քնքության պահին
Հարցեր էր ուղղում
Իր դիմորդներին:
Ով որ չէր գտնում
Հստակ պատասխան,
Առանց երկընտրանք
Ասում էր նրան.
«Ընա', պրպտի'ր,
Հեշտ արհեստ գտիր,
Թեոլ դժվարին
Հանձնիր ընտրյալին»:
...Հիմա մեջքերեմ
Մի գլուխկոտրուկ,
Որը փվել էր
Անանիան հայտուկ`
Պարզելու համար`

Ինքը հարկապես
Ո՛չ պիտի ընտրի
Աշակերտ որպես:
«Աթենքում կար հին
Քարե ջրամբար,
Կառույցը ուներ
Երեք ջրապար,
Երեք խողովակ՝
Տարբեր հաստության,
Ավազանն էին
Լցնում հանդրության:
Ամենից հաստը
Բացելու դեպքում
Ջուրը լցվում էր
Ո՛ղիղ մեկ ժամում,
Միջին հաստության

Այլ խողովակը
Անմահ հեղուկի
Նույն մակարդակը
Ապահովում էր
Ջրավազանում,
Հաստատ եմ ասում,
Ճիշտ երկու ժամում:
Ամենաբարակ
Մեղ ջրատարով
Այն կուտակվում էր
Ցանկալի չափով,
Բնականաբար
Դանդաղ հոսելով,
Երեք ժամ անվերջ
Իր գործն անելով»:



Թվերի' գիտակ,
Դո՞ւ ինչ ես կարծում,
Հատկապես որքա՞ն
Ժամահատվածում
Երեք հոսքերով
Միաժամանակ
Լցվելու դեպքում
Ջուրը կամբարվի
Խոր ավազանում:
Եթե պարզեցիր,
Դյուրավ լուծեցիր,
Համոզվա'ծ եղիր,
Գիտունի'կ ընկեր,
Որ Շիրակացին
Քեզ էլ սան կընտրեր:

# ՏԱՐԻՔԸ

Հայտնի փաստ է, որ ո՛չ մի կին,
Քառասնամյա ո՛չ մի տիկին
Ճիշտ տարիքը հեշտ չի ասում
Կամ լռել է գերադասում:
Եթե նշի, թե այդ տարի
Հիսնամյակը պիտի տոնի,
Հավատացեք՝ արդեն վաղուց
Հիսունութն անց նա կլինի:
Երբ տարիքով գեղեցկուհին
Թռցնում է իր բերանից
Իբրև վաթսունն է լրացել,
Հետն էլ՝ երեք ամիս անցել,
Չկասկածեք՝ մոռացել է,
Որ տասներեք տարի առաջ



Վեց տասնամյակն է բոլորել,
Տհաճ փաստից խիստ մոլորել:
...Քսան տարվա տիրույթիկը
Ժամանակ է շատ բավարար՝
Որոշելու բուն տարիքը
Ցանկացած մարդու համար,
Եթե տվյալ մահկանացուն
Կերպարանքը չի փոփոխել
Կամ այնպիսի հարված կրել,
Որից տեսքն է ձևափոխվել:
Հարկավոր է հինգ անմեղ հարց
Տալ ձեզ հուզող, ընտրյալ անձին՝
Պահպանելով կանխավ նշված
Ինտերվալը՝ քսան տարին:
Եթե անկեղծ պատասխանի,
Դուք կհասնեք ձեր ուզածին...

Կարիք չկա, որ նա խոսի,
Իր տարիքից մի բառ ասի,
Ընդամենը թող հաստատի՝
Զուտ դրական շարժումներով
Կամ գլուխը տարուբերի՝
Պատասխանը բացասելով:

Իսկ թե ինչ ես հարցնելու,
Ներող եղիր, չեմ հուշելու,
Եթե թելի ծայրից բռնես,
Համբերատար կծիկ անես,
Խառնիճաղանջ այս թնջուկը
Նախորդի պես հեշտ կքանդես:

# ԾԻՐԿԱՅՈՒՍ

Ամռան տապից փախչելու
Հնար էր ես ուզում,
Հանգստյան տուն մեկնելու
Մասին էր երազում:
Մի ուղեգիր ճարեցի,
Ճամպրուկներս կապեցի,
Սառնարանում ինչ մնաց,
Հարևանիս տվեցի:
Նույն միջոցին, թարսի պես,
Քույրս զանգեց ու հայտնեց,
Թե գալիս է ընթրելու,
Ավտոկայան ճամփելու:
Տնից հապճեպ դուրս եկա,
Այս ու այն կողմ ես ընկա,



Որ քիչ ու միչ բան առնեմ,
Փոքրիկ սեղան բաց անեմ:
Մի քանի հյութ ընտրեցի,
Տաք կարկանդակ գնեցի,
Բայց երբ մտա մոտ շուկան,
Տեսա՝ մարդիկ էլ չկան:
Մի ծեր կին էր մնացել,
Ապրանքներն էր կապկպում,
Զամբյուղի մեջ դարսելով՝
Նա էլ տուն էր շտապում:
-Մայրի'կ, ի՞նչ ես վաճառում,
Դեղձ և սալոր եմ տեսնում,
Տանձ ու խնձո՞ր էլ ունես,
Արժեքները ինձ կասե՞ս:
-Դու բոլո՞րն ես առնելու,
Թե՛ խնձորն ես տանելու:

-Չէ', ամբողջը գնելուն
Գումարս չի հերիքի...
-Դե' սիրելիս, ոնց գիտես,
Բայց սալորն էլ որ գնես,
Մնացածը կպահեմ,
Մեկ-երկու շարք չիր կանեմ:
-Լա'վ, միայն թե մրգերի
Ճիշտ գները դուք ասեք,
Մոտիս գումարը համրեմ,
Կասեմ՝ որոնք ես կառնեմ:
-Թե սալորը չգնես,
Ինը հարյուր և վաթսուն
Դրամ պետք է վճարես,
Թե որ խնձորը չուզես,
Կլոր ինը հարյուրը
Դու մայրիկին կթողնես,

Եթե դեղձից ձեռք քաշես,
Ութը հարյուր և վաթսուն
Պիպի միայն վճարես,
Իսկ թե պանձին ձեռք չպաս,
Յոթը հարյուր և վաթսուն
Դրամ այդժամ ինձ կպաս:
-Հարմար գներ եք ասում,
Սակայն, ափսո՛ս, հարգելի՛ս,
Ինը հարյուր քառասուն
Դրամ ունեմ ես ձեռքիս,
Ձեր հաշիվը ոչ մի կերպ
Չի հարմարվում գրպանիս:
-Կիրթ աղջիկ ես երևում,
Ապրանքս չես փնովում,
Պտուղներս վերցնելով`
Ունեցածդ վճարում:



Քո խելքով էլ զարմացրու,
Սրանց ամբողջ արժեքը
Ջուր պեղը մի՛ հարցրու,
Այլ ինքնուրույն դա պարզիր,
Սրևահամ մրգերս
Որպես պարգև ապացիր:
Աշխույժ կնոջ սաամբը
Զավեշտալի բան թվաց,
Երբ գները թվեցի,
Աշխարհի չափ զոհ մնաց:
Տվերներս առնելով՝
Հապճեպորեն քայլեցի,
Ծանրությունից հևալով՝
Քաչ ու քրտինք կտրեցի:
... Հասամները ընտրեցի,
Սրգամանում դարսեցի,

Մնացածը շարանով
Պարզգամբում կախեցի,
Որ մինչ գնամ ու եպ գամ,
Արևի պակ չորանան,
Դրանք, անշուշպ, պեպք կգան,
Երբ ձմռանը հյուրեր գան:

Հավապարի'մ լավ ընկեր,
Իմ պուն արի, չրեր կեր,
Ոչ թե դու էլ հաշվարկես,
Արժեքները որոշես,
Որքան գումար շահեցի,
Անկեղծ ասեմ, շատ քիչ:

Ճշգրպորեն ինձ ասես,
Չարաններիս մեկ հարը
Խոսրանում եմ՝ կպամ քեզ:

# ՎԱՍԻԼԻ՛Ն

Սառնամանիք էր դրսում,
Իսկ ծերուկը չէր մրսում,
Իր ինքնաշեն հին սազով,
Հնուց եկող հնարքով
Հանդարտ օղի էր թորում,
Անելիքն էր մտորում:
Վերջին տարան հենց լցրեց,
Դռան բախոց նա լսեց,
Հարևանից արտնեղած՝
Քթի տակին մռթմռթաց.
«Երբ որ ինքն է պարտք տանում,
Շաբաթով ձեն չի հանում,
Միայն մեկ շիշ փոխ առա,
Սրա գերին ես դառա»:



Վեռ սողնակը եփ մղեց,
Այցելուին ներս թողեց,
Առանց վրան նայելու՝
Անկոչ հյուրին պարփիրեց.
- Տափի'ր էսպեղ, մինչև ես
Քո բաժինը կլցնեմ,
Հուսով եմ՝ քիչ կսպասես,
Բեռ շափ փաք է, կվառվես:
Գլուխը կախ, խոժոռված
Գնաց դեպի մառանը,
Ձեռքը առած արաղի
Մեկլիփրանոց ամանը:
Ցարան դրեց սեղանին,
Տայեց դրկից Իվանին,
Վայրկենապես գունափվեց,
Չարք փեսնելով պապանձվեց,

Բայց սատանան ջերմացին
Խմեց ապշած գեղջուկին.
-Ծա'տ լավ մարդ ես, Վասի'լի,
Սրտիս սաստիկ դուր եկար,
Ատամ-ատամ դողում եմ,
Սառա բքից խելագար:
Արագացրո'ւ, բաժա'կ բեր,
Ցրտից եմ ես անհամբեր,
Լցրո'ւ, հապա մի խմեմ,
Ողջ մարմինս տաքացնեմ:
Ծերն իր սխալ վարմունքով
Տուն էր առել հարամուն,
Հետն էլ խնդրել, որ նստի
Ու սպասի թունդ օղուն:
Փոշմանել էր, բայց ուշ էր,
Պետք է նրան գոհացներ,



Թթու փարունգ, հաց դրեց,
Ալանի կաթ շուփ լցրեց,
Որ պապիվ փա սափանին,
Ջբարկացնի գազանին:
Մարդանման կենդանին
Մեկ-երկու թաս հենց գցեց,
Ամբողջ ջանը եփ եկավ,
Պաղ կապարը փաքացրեց,
Խաղաքարփը ձեռքն առավ,
Հյուրընկալի կողմ դառավ.
-Արի' մի քիչ թուղթ խաղանք,
Դե', էլ ի՞նչ ես մփածում,
Գիփեմ՝ չունես մրցակից,
Հավասարը էղ գործում:
Բայց ասեմ քեզ, պապվելի'ս,
Որ պայման եմ ես կապում,

Եթե հաղթես, ձախ ձեռքիս
Մատանին եմ խոստանում,
Իսկ թե հանկարծ դու պարտվես,
Քո ձին պիտի նվիրես:
Ճար չուներ ծերուկը,
Աթոռակը մոտ քաշեց,
Այսի դիմաց նստելով`
Խաղաթղթերը խառնեց,
Այդ ընթացքում մտովին
Վեղծ պատմություն մոգոնեց.
«Ասպված գիրի` ինչ կանի,
Ձե որ սրան ես տանեմ,
Միրումնավոր տարվելով`
Ձիուկի՞ց հո կզրկվեմ»:
Վերջը գտավ` իր կյանքից
Առավել թանկ բան չունի,

Քարպերն էնպես բաժանեց,
Որ գրազում չհաղթի:
Խաղը երկար չձգվեց,
Շիշը մեկեն դատարկվեց,
Իսկ Վասիլին հիմար չէր,
Սապանային հեշտ զիջեց:
Տեր դառնալով ձիուկին`
Հյուրը անչափ գոհացավ,
Թակարդն ընկած բիձուկին
Մտերմաբար խոսպացավ.
-Մի' վրդովվիր, բարեկա'մ,
Մի' դժգոհիր ծուռ բախտից,
Ոչի'նչ, էլի ես կգամ,
Գուցե հետո՞ հաղթես ինձ:
Գնանք ախոռ, հա'խդ պուր,
Արագ իմ տուն սլանամ,



Վեսգիշերն է մոտենում,
Թե՞ ուզում ես դեռ մնամ:
-Չրուս կպամ, որ գնաս,
Միայն ասեմ, գիտենաս՝
Նժույգս եմ լոկ պարտվել,
Բայց պայտերը չեմ փարվել:
-Ա՛յ թե փիպն ես, Պետրո'վիչ,
Հումորասեր փոքր-ինչ,
Լա'վ, ժամանակ քիչ ունեմ,
Սանձը բռնի'ր, ես հեծնեմ:
-Ընկե'ր, թամբն ու նալերը,
Պախուրցն անփող ես կպամ,
Սակայն պայտի գամերը
Ախր թանկ են, ինչպե՞ս փամ:
-Իսկ ի՞նչ արժեն մեխերը,
Որ ուզում ես քեզ պահել,

Թե՛ հույս ունես համոզել՝
Մաքուր ոսկուց են շինվել:
-Անկեղծ կասեմ, Շեկլիկիս
Ջրի գնով ես առա,
Երեք հարյուր ռուբլիով
Երիվարի պես դառա
Ու քանի որ պայտված չէր,
Պայտագործի մոտ տարա:
Տասնվեց հատ մեխ զարկեց,
Մինչև դրանք ամրացրեց,
Գիտե՞ս՝ ինչքան պահանջեց,
Որքան գումար նա գռփեց...
Առաջին գամ խփելուն
Մեկ կոպեկ եմ վճարել,
Երկրորդ գամը մեխելուն
Երկու կոպեկ եմ տվել,

Երրորդ մեխին՝ չորս կոպեկ,
Իսկ չորրորդին՝ արդեն ութ,
Հետո հերթով բոլորին
Ես տվեցի առանձին
Միշտ նախորդի կրկնակին:
Ինչ փորձանքի մեջ ընկա,
Վերջում միայն հասկացա,
Գործը արդեն արված էր,
Փորուփոշման հեռացա:
Ջարքը մտքում հաշվարկեց,
Կոպեկ-կոպեկ գումարեց,
Վերջն ստացված արդյունքից
Ինքն էլ շշմեց, շվարեց.
-Եղբա'յր, ձիուդ քեզ պահիր,
Ինձ պարտքի տակ մի' գցիր,
Գատելով քո ասածից՝

Գամը թանկ է նժույգից:
Թողեց, ոտքով հեռացավ,
Իսկ Վասիլին պարծեցավ,
Թե լավ հունար բանեցրեց,
Թալանվելուց խույս տվեց:

Ճավապարի'մ իմ ընկեր,
Բարդ հաշիվը գլուխ բեր,
Ասա', այդ ի՞նչ թիվ կազմեց,
Որից հյուրը կարկամեց,
Թղթախաղով հաղթած ձին
Նա ինքնակամ ետ տվեց:

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԿՈԼՈՒՄԲՈՍԸ- Ծովագնացը վերցնում է հավկիթը, զարկում է սեղանին, փափակեցնելով ծայրը, և այն շատ հեշտորեն մնում է սեղում կանգնած:

ԴԱԴԻՐՈՒՄԸ- Ունեցել է 7 կին, 49 որդի և 49 հարս (98 հոգի), 343 թոռ և 343 հարսիկ (686 հոգի), 2401 ծոռ: Տոհմածառին գրված է եղել ընդհանուր թվով 3.193 անուն, որոնք են՝ ինքը (1 անձ)+կանայք (7 անձ)+որդիներն ու հարսները (98 անձ)+թոռներն ու հարսիկները (686 անձ)+ 2401 ծոռները:

ՈՍԿԵՐԻՉԸ- Դրամները շարել երեքական, այնուհետև՝ ա) 3-ը դնել կշեռքի մի թաթին, 3-ը՝ մյուս, եթե որևէ մեկը թեթև գտնվի, այդ եռյակում է կեղծված ոսկին, եթե ոչ՝ սեղանին մնացածի մեջ է: Թեթև եռյակի դրամներից երկուսը դնել լծակավոր կշեռքի տարբեր թաթերին: Որ կողմինը թեթև լինի, դա է կեղծը, իսկ եթե հավասարակշիռ վիճակ է, ապա սեղանին մնացածն է կեղծվածը:

**ԱՆԱՆԻԱՆ-** Երեք խողովակներով միաժամանակ հոսելու դեպքում փվյալ ջրամբարն ամբողջությամբ կլցվի ժամի 6/11-րդ հատվածում:

**ՏԱՐԻՔԸ-** Եթե ձեզ հետաքրքրող անձը, արտաքինից դատելով, գտնվում է 30-50 տարիքային միջակայքում, վերցրեք դրա միջինը և հարցրեք՝ 1) 40-ից մե՞ծ եք, եթե ասի՝ ոչ, հարցերը շարունակեք 30-40 սահմանի համար, իսկ եթե՝ այո, ուրեմն՝ 40-50-ի: Դիտարկենք «ոչ» տարբերակը՝ հարցնելով՝ 2) 35-ից մե՞ծ եք, եթե ասի՝ ոչ, հարցրեք 35-ի միջինը, այսինքն՝ 3) 33-ից մե՞ծ եք, եթե ասի՝ ոչ, ապա շարունակեք 4) 32 տարեկա՞ն եք, եթե դրան էլ բացասաբար պատասխանի, ապա տվեք վերջին հարցը՝ 5) 31 տարեկա՞ն եք: Հարցադրումները այս տրամաբանությամբ կառուցելով՝ կպարզեք ցանկացած անձի տարիքը:

**ԾՈՒԿԱՅՈՒՄ-** Սալորն արժեր 200 դրամ, խնձորը՝ 260, դեղձը՝ 300, իսկ տանձը՝ 400: Շահել էր 1160 դրամ:

**ՎԱՍԻԼԻՆ-** Ըստ շինծու պայմանության, գամերի արժեքը կազմում էր 327 ռուբլի, 68 կոպեկ, որը 27 ռուբլի և 68 կոպեկով թանկ էր 300 ռուբլիանոց ձիուց:

Կ. Ս. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Էլ. փոստ՝ karinemkrtumyan@rambler.ru

# ՀԱՇՎՈՒՄ Է ՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ

## ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ

ԵՎ ՍՐԲԱԳՐԻՉ՝

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏՔԱԳՐՈՂ ԵՎ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝

ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ



ՉԱՓՍԸ՝ 84X60, 1/16:
ԾԱՎԱԼԸ՝ 4,4 ՏՊ. ՄԱՄՈՒԼ: